ԼՂՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՆՈՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԷՋԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Առաջին բլոգում տեղ են գտել առաջնահերթ կարևորության բաժինները:

1.**Ողջույնի խոսք** - ԼՂՀ ԿԸՀ նախագահի ողջույնի խոսքն է կայքի այցելուներին:

2.**ԼՂՀ ընտրողների ռեգիստր** –Իրենից ներկայացնում է ընտրողների տվյալների բազա, որը, համաձայն ընտրական օրենսգրքի, թարմացվում է վեց ամիսը մեկ՝ հունվար, հուլիս ամիսներին, ԼՂՀ ոստիկանության կողմից տրամադրված տվյալների հիման վրա: Ներկայումս կայքում տեղադրված են 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ստացված տեղեկությունները: Ի դեպ, ընտրողների անհատական տվյալները հասանելի են միայն ՀՀ և ԼՂՀ տարածքից կայք այցելողներին:

3.**Օրենսդրություն** բաժնում տեղակայված են օրենքներ,ԿԸՀ որոշումներ: Նորություն է ***Նախագծեր*** ենթաբաժինը, ինչը հնարավորություն կտա հանրության ուշադրության կենտրոնում պահել ԿԸՀ կողմից մշակվող իրավական ակտերի նախագծման փուլը:

4. **ԼՂՀ ընտրական համակարգ** բաժնում ներառված են ընտրական համակարգի կառուցվածքի և պատասխանատուների վերաբերյալ տվյալները:

5. **ԿԸՀ նիստեր** բաժնում ԿԸՀ բոլոր նիստերի օրակարգերն են:

Առանձնացված է **ԼՂՀ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐ** բլոգը, որն իրենից ներկայացնում է 11 ընտրատարածքների բաժանված ԼՂՀ ամբողջ տարածքի գծապատկերը, այդ ընտրատարծքներից յուրաքանչյուրում ներառված համայնքները:

Երկրորդ բլոգում տեղ են գտել հետևյալ բաժինները.

1.ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ , որում կլինեն հանրապետությունում ***կայացած*** բոլոր տեսակների ընտրությունների (Նախագահական, Խորհրդարանական, ՏԻՄ, Հանրաքվե) վերաբերյալ տեղեկություններ:

Ընթացիկ ենթաբաժինն ավելի ընդլայնված ինֆորմացիա կպարունակի ընտրությունների նախօրյակին և ողջ ընթացքում:

2. Առանձնացված և առանձին կարևորություն է տրված նոր՝ **ԴԻՏՈՐԴՆԵՐ** բաժնին, որտեղ կլինեն Արցախ այցելած դիտորդների գրավոր եզրակացությունները, կարծիքները, ինչպես նաև դիտորդների վերաբերյալ տեսանյութեր և լուսանկարներ:

3.ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ բաժնում կլինեն հարցազրույցներ , ԶԼՄ-ները՝ մեր մասին,հանդիպումներ, այցեր ենթաբաժինները:Նորություն է **Ընտրական քրոնիկոն** ենթաբաժինը, որն իրենից ներկայացնելու է տարբեր երկրների ընտրական պրոցեսների մասին տվյալների բազա:

4. ՆՅՈՒԹԵՐ բաժնում տվյալներ են ներառված մասնագիտական դասընթացների, կազմվող ուսումնական ձեռնարկների և ուղեցույցների մասին, ինչպես նաև վերլուծություններ, ԿԸՀ հաշվետվություններ:

Երրորդ բլոգը ներառում է **ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** և **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** բաժինները՝ ԼՂՀ ընտրական համակարգի գործունեության վերաբերյալ պարբերաբար թարմացվող տեղեկատվությամբ:

Չորրորդ բլոգը պարունակում է՝

Կայքի նախկին տարբերակը, որը դեռ ակտիվ կլինի մեկ տարվա կտրվածքով:

Ֆոտոարխիվ, որն իրենից ներկայացնում է տարբեր ընտրություններից հավաքված ֆոտոդարաններ՝ հագեցված ժամանակակից տեխնիկական հնարավորություններով:

Տեսանյութեր բաժինն իրենից ներկայացնում է ԿԸՀ-ի տեսանյութերի ամբողջ արխիվը՝ առանձնացված ենթաբաժիններով, ինչը թույլ կտա սեղմ ժամկետում գտնել փնտրվող տեսանյութը:

Օգտակար Հղումներ բաժնում տեղ են տարբեր գերատեսչությունների վեբ կայքերի հասցեները:

Կայքի ստորին մասում տեղակայված են հետադարձ կապ, կոնտակտային տվյալներ, հասցե, ինչպես նաև մեր Youtube-յան, FB-յան էջերին հետևելու, գրանցվելու հնարավորություններ:

Նոր կայքում ավելացված է նաև **որոնման** հնարավորությունը, որը կհեշտացնի կայքում գտնել որոնվող նյութը:

Կայքը կլինի հասանելի եռալեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն տարբերակներով:

Նոր կայքը կգործի cecnkr.am հասցեով: